ՀԱՎԵԼՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՇԻՐԱԿ

ՂՈՒԼ-ԶԱԴԱ ԵՎ ՆՈՒՌԻ-ԳՅՈՒՂԱԼԻ

Ժամանակօց կէղնի չի էղնի մե թաքավորմ՝ կէղնի։ Էղ թաքավորը մենձ կարօղութէն կունենա, հրմը մեննակ մե տղէմ՝ կունենա։

Էղ տղէն կէղնի տասնըհինգ, տասնըվեց տարեկան։ Անունն էլ Ղուլ-զադա կէղնի։

Տղէն գ՝ելնի մե լավ ձ՝իմ՝ կը հեծնի, հ՝ընգեր տղօց հետ կէրթա մեշեքը ավճութէն կէնե, իրիկունը դ՝առնա գուքա կը տուն։

Օրվանըմ՝ մեկն էլ հ՝ընգեր տղէքը րիթտուն տեղ կէրթան, ինքը կը մնա մեննակ։ Կը հեծնի ձ՝ին, կառնե զիլֆիղար թուրը, կէրթա որսի։ Էս կօղմը կը զարկըվի, էն կօղմը կը զարկըվի տեյմ՝օր ցօրեկ հեչ բ՝անըմ ձ՝եռքը չի ընգնի։ Հերսը գելնի դ՝առնա կը, գուքա կը տուն։

Ճամփէն կը տեսնի օր քաղքի տղէքը պղի[1] վրա հօլ կը խաղան։ Ինքն էլ գիշնի էդոնց հետ հօլ կը խաղա։ Խաղցած վախտը մե պառավմ՝ ջ՝ուր կը տանի էղե, գուքա էսօնց քօվը, կուժը վար կը դ՝նե, սեյր կէնե։ Մեկ էլ թաքավորի տղեն հօլը թապլելու պես հօլը կէրթա կը դիպնի էդ խեղճ պառավի կժին ու կուժը կը ջ՝արդե։

Պառավը դուլա, կ՝անիծե էդ տղին, կըսե.— Նուռի-Գյուղալի սէրը սիրտդ ընգնի, վառիս ու էրիս։

Էդ խօսքը ըսելու պես՝ դիտես թե կրակմ՝ ընգավ էդ տղի սիրտն

---

[1] Սառույց (Մ. Բ.)։

ու սկսեց վառել։ Տղէն թողեց հօլն ու հ'ընգերդանցը, հեծավ ձ'ին, էկավ տուն։

Հ'եքսի օրը հ'ելավ ինքն իրան ըսավ. «Ես պըտի էրթամ հ'աշխըրբէ հ'աշխարք ման գամ, էդ Նուռի-Գյուզալին դտնիմ»։

Տղէն հ'ելավ կապեց զիլֆիղար թուրը, հեծավ ձ'ին, մե խուրջինմ' էլ օսկի առավ, ընկավ ճամփա՝ գ'նաց։ Սարէ սար, ձորէ ձոր, չօլէ չօլ անցավ, տեղ չմնաց օր ոտքի տակ չըտար։ Գ'նաց մե մենձ մեշիմ մեշ նստավ, հաց կուտեր, տեսավ օր մե չ'եյրանըմ' դ'եմը կայնած է։ Ջ'եյրանը տեսնելու պե՛ս գ'իտես թե սիրտը ճեղքեցին, չ'եյրանը մեջը դ'րին։ Հաց, բ'ան թողեց ու ձ'ին հեծավ, ընդավ էդ չ'եյրանի հ'ետևէն։ Ջ'եյրանը գ'նաց, ինքը հ'ետեէն, չ'եյրանը գ'նաց, ինքը հ'ետեէն, օխտը սար, օխտը ձ'որ, անցան՝ մեկ էլ մե դ'յուզ տեղմ' չ'եյրանը գ'նաց մե քյոշկ ու սարայի մեջ մտավ, ղատդն անցավ։

Տղէն դ'նաց քյոշկ ու սարայի քովը կայնավ, տեսավ օր ո'չ դ'ուռ ունի, ո'չ հ'էրթիկ։ Քաշեց հարուր լըտրանոց զիլֆիղար թուրը՝ քյոշկ ու սարային զարկելուն պես մե կողքը կիսեց, թափեց։ Նես մտավ, տեսավ օր հեչ բ'ան չի էրևա, մե տեղմ' է քցած, մե մենձ նուռմ' էլ կողքը դ'րած։ Վերուց նուռը ճեղքեց, տեսավ օր մե լսի կտոր աղջիկմ' մեջը քնած է։ Աղջկա թուշը պաքելուն պես՝ աղջիկը վեր թռավ։

— Յա՜,— ըսավ,— Ղուլ-ղադա ջան, էկե՞ր ես։

— Հա՜,— ըսավ,— էկեր եմ,— ըսավ, ու փաթթըվավ աղջկան։

Վախտմ' անցավ, տղեն սկսեց աղջկան հարց ու փորց էնել գ'ըլխու էկածը։

Աղջիկն ըսավ.— Ես մե հարուստ բ'ազրկյանի աղջիկ էի, մեր քաղքի թաքավորը իրան տղին գուզեր ընձի, հերս էլ չէր տա։

Ինչրդ էղավ, ինչրդ չէղավ, էս հ'իրեք գ'լխանի ղօվտը էկավ, ընձի փախուց բ'երեց իստեղ։

Տղեն կըսե.— Հ'ըպը հ'ո՞ւր է էդ ղօվտը։

Կըսե.— Էդ ղօվտը գ'նացեր է էդ դ'եմի սարի տակը կռիվ կէնե։ Էնտեղ իրեք դ'և կան, գուզեն օր գ'ան, ինձի ձ'ե ւքէն խլեն, տանին՝ չեն կրնա։

Տղեն կրսե.— Էդ ի՞նչրդ բ'ան է, օր հ'իրեք դ'ևը չեն կրնա էդ ղօվտին հաղթե։

Աղջիկը կըսե.— Քա՛, ինչ կըսես, հ'իրեք գ'լխանի ղօվտ է, ինչքան օր գ'լխները կր կտրեն, էլի կր սաղնա, չունքի օր էդօր հօքին հ'իրեք հատ ճնճրղուկ է, մե ղութկիմ' մեջ դ'րած, իդի վերը թարքի

վրա պայել է։ Տեյմ՝ օր էդ ճնճղուկների գ՝լոխը՝ կտրեն, էդ ղովտը չի մեռնի։

Տղէն կըսե.— Նուռի-Գյուզալ ջան, դ՝ու ի՞նչ գ՝իտես։

Աղջիկը կըսե.— Ես ղյաքուբէնով իմացեր եմ։

— Օր էդպես է, կեցի,— կըսե.— ես էդոր ղուբիկը վար առնիմ, էրթամ էդ ղովտի էլ, էն դ՝ևերու էլ գ՝լոխը կտրեմ, դ՝ամ քեզի առնիմ էրթամ։

Վար կառնե էդ ղուբիկը, դ՝նե կը ծոցը, ձ՝ին կը հեծնի, կէրթա էդ ղովտի ու դ՝ևերի քովը։

Տեսնի՛ կ՝օր, աղջկա ըսածի պես, հ՝իրեք դ՝և մե ղովտիմ՝ հետ էնպես կռիվ կէնեն, օր սար ու ձ՝օր կը թնդա։

Տղէն ինքն իրան կըսե. «Ի՞նչ էնեմ, թե օր հ՝իրեք դ՝ևի կողմն անցնիմ, պըտի ըսեն վախեցավ, թե ղովտի կողմն անցնիմ, պըտի ըսեն լոպպըսցավ, լավն էն է էրթամ բ՝արև տամ, վով օր թեղ բ՝արևս առավ, էնօր կողմն անցնիմ»։

Գնաց, բարև տվեց, ղովտը էն սրհաթին բ՝արևն առավ։ Անցավ էդ տղէն ղովտի կողմը, ըսավ.

— Դու քիչմ՝ հանգստացի, ես հ՝ելնիմ կռվիմ էդօնց հետ։ Ղովտը նստավ, տղեն քաշեց թուրը, հ՝ընգավ էդ դ՝ևերի մեջ, հ՝իրեքի էլ գ՝լխները կտրեց, հ՝ելավ էկավ ղովտի կուշտը։

Ղովտը մնաց զարմացած։ Մտքի մեջը ըսավ. «Էս տղեն հ՝եքուց մեկել օր գ՝իմանա օր ես Նուռի-Գյուզալին փախուցեր եմ, գելնի իմ դ՝եմս կը կռվի, լավն էն է՝ հիմիկուց վեջացընեմ»։

Տղա,— կըսե,— ե՛լ, կռիվս կռիվ է։

Տղի ուզածն էլ էդ էր, մահանիմ կաշեր։

Գելնի տղեն, ախպեր շան, էս կողմը կը զարկեն, էն կողմը կը զարկեն, մեկ էլ տղէն սամթի կը բ՝երե, հարուր լըտրանոց թուրն օր գ՝լխուն չի տա, հ՝իրեք գ՝լոխն էլ մեկեն կը թռնին։

— Այ հա՜յ,— կըսե ղովտը,— իսան օղլի, մեկ էլ զարկ։

Տղեն կըսե.— Մօրես մեկ եմ էղե, մեկ կը զարկեմ։

Ու ծոցէն կը հանե ղուբիկը, բանա, էդ հ՝իրեք ճնճղուկի ճտերն էլ կը թռցընե, օր չէղնի թե ղովտը հ՝ետև կենա սաղնա։ Հ՝ետև ձ՝ին կը հեծնի, ուրախ-ուրախ կը քշե, գուքա Նուռի-Գյուզալի քովը։

— Նուռի-Գյուզալ ջան,— կըսե,— ղովտին էլ, հ՝իրեք դ՝ևերին էլ սրպանեցի, ե՛լ էրթանք։

Գելնին, գընգնին ճամփա, կէրթան։ Կէրթան, շատն ու քիչը աստված դիտե, մեկ էլ տղեն կը տեսնի օր օխտը ճամփու վրա

Հ՚իրեք ղովտ կայներ են, էրթրցող գալօղին կայնեցընեն, թալ-նեն կր։

Տղին օր կր տեսնին, ղովտի մեկը մեկելին կըսե.

— Ա՜յ թալնելու բան, լսի կտոր աղջիկը հետը։ Քելեք էրթանք, ր՚ոնենք, ր՚ներենք։

Տղէն տեսնի կ՚օր ղովտերը դեպի իրան դուքան, ինքը առանց վախենալու ձ՚ին կը քշե դեպի ղովտերուն, թուրը կը քաշե, ու տուր թե կուտաս։

Էդ Հ՚իրեք ղովտին էլ էղտեղ կը սատկեցընե, ճամփորթներին էլ կաղատե, ասսու անունը կուտա ու դրյնի ճամփա, կէրթա։

Կէրթա, կէրթա կը հասնի իրան հոր քաղաքը։

Քանի տարի էր՝ կօրել էր, հել մարդ խապար չէր, թե հ՚ո՞ւր էր դ՚նացե։

Խապարը կէրթա հորը՝ թե «տղեղ էկեր է»։ Հէրը կէրթա տղին էլ, հարսին էլ կառնի, դուքա տուն։

Օխան օր, օխտը գ՚իշեր հարսնիք կէնե, էդօնց կը պսակե։

Էնօնք կը հասնին իրանց մուրազին, դ՚ուք էլ հասնիք ձ՚եր մուրազին։

Հ՚երկնքէն Հ՚իրեք խնձոր դընկնի. մեկն ըսօղին, մեկը՝ լսօղին, մեկն էլ ալամ աշխարքին։

ԲԱՍԵՆ

ԿՆԿԱՆ ՍԸՌ Չ'ԸՍԵՍ

Ժամանակին մեկ մարթըմ ախքատ կ'ըլլի։ Կնիկը շատ ագաթ-սըզ կըլլի։

Կնիկը ըսավ.— Թե օր դու ինձի էս հարուստներու պես կը պայես գու, քեզի ես կնկութէն կէնեմ, չէ սե՝ քեզի բօղաղմիշ[1] *կէնեմ։*

Էրիկը գնաց, մայլի մեջ պառավըմ կար, իրեն սըռ այտնեց։

Էս կնիկը ըսավ մարթուն.— Գնա էն կնկանեդ քառասուն օր օր առ։

Էն էլ գնաց կնկանէն քառասուն օր օր առավ։

Մարթը էկավ էդ կնկան ըսավ.— Ես իմ կնկանէն քառասուն օր օր առա։

Կնիկը ըսավ մարթուն.— Դու ամեն առավօտ հաց մի աջի ծո-վը ցիք։

Մարթ ամեն հ'էքվան մեկ հաց ծօվը կու ցքեր. եօեսունինը օր հաց ցքեց, քառասուն օրը թմմած, ձուկըմ ծօվու միջեն ելավ, մար-թուն կլլեց, առավ ծօվու մեչը կու տաներ, ջուրը մարթուն բան չէր էնե։

Ձուկը մարթուն ըսավ.— Ինսան օղլի, ես քեզի հ'՞ուր կ·ու տանիմ։

[1] *Թողնել* (Ս. Բ.)։

Ըսավ.— Ես չիտեմ հ'ուր կը տանիս։

Զուկը ըսավ.— Եփ օր դու ամեն էքվան էն մեկ հացըմ ծօվը կու ցքեիր, մենք էն հացը կ'առնեինք մեր թաքավորին կու տանեինք, մեր թաքավորն ըսավ. «էս մարթուն բերեք, էնօր մուրազը տամ», ես էլ էկա քեզի կու տանեմ գու. ի՞նչ մուրազ պիտի ուզես դու մեր թաքավորեն։

Ըսավ.— Ես չիտեմ, ինչ պիտի ուզեմ։

Զուկը կ'ըսե.— Ես քեզի ինչ տեսակ օր կու խրատեմ, դու էն տեսակ էրեւ Ինսան օղլի', եփ օր մեր թաքավոր կ'ըսե. «Ուզե, մուրադըդ տամ», ըսե. «Իմ մուրադս քու սաղութեն է», թաքավորը կըսե. «Իմ սաղութենէս քեզի օքուտ չկա», դու ըսե. «Եփ օր քու սաղութենէդ ինձի օքուտ չկա, անդամըմ իմ բերանս թքե»։

Զուկը սովրեցուց Ինսան օղլուն պրծավ, մարթուն առավ ու թաքավորի քովը տարավ։

Թաքավորն ըսավ.— Ինսան օղլի, դու ի՞նչ դիտեիր օր ես իսնի հացին քաղցած էի, դու ինձի ամեն էքվան հաց մի պաշար տվիր, ուզե քու մուրադըդ տամ։

— Իմ մուրադս քու սաղութէնդ է,— ըսավ։

Թաքավորը ըսավ.— Սաղութենէս քեզի խեր չկա, ուզե մուրադըդ տամ։

Ինչպես օր իրեն տանող ձուկը իրեն խրատել էր, էն էլ էնօր խրատով ըսավ.— Դու, մինակ իմ բերանս թքե։

Թաքավորն ըսավ.— Քու ուղած մուրադըդ կուտամ, միննակ թե Ինսան օղլու չայտնես սրդդ, ինչ օր օր այտնեցիր, մայդ էն օր կու հասնի դու։ Բաց բերանդ,— ըսավ։

Մարթը բերանը բացեց, ձուկ[1] թաքավորը բերանը թքեց։ Իրեն տանող ձկին հրաման էրավ թե.— Տար, չորը հանե։

Զուկը առավ, բերեց, չորը հանեց։ Մարթը չորը նստավ, շիվարավ, կայնավ։ Կու մտածեր. «էս ինչպես է էղել. հ'ո՞ւր եմ գնացել»։ Խելքը դլխուն էկավ, մեկ քարիմ լերթ[2] տվեց նստավ։ Տեսավ օր ճիճուները կը խոսին ամեկ ուր լեզվով, ինքն էլ կը հասկնար ճիճուներու լեզուն։ Ինքը ծովի քյանարին մոտիկ էր, ծովը, ամեն ճիճու, օձ, ջանավար, գորտ կու խոսեին դու, ինքը կու հասկնար։ Ինք իրեն գործին կու մտածեր գու. «էս ինչ բան էր, օր ամենը կու խոսեն ես կու հասկնամ գուս։ էն սահաթին մեկ ճնճուղըմ էկավ իրեն առջևեն անցավ, ըսավ.— Ինսան օղլին երանի թե խելք ունե-

[1] Ընագրում՝ ձուկը բերանը թաքավորը բերանը թքեց (Ս. Կ.)։
[2] Կոնակ (Ս. Բ.)։

նար, քարի տակը գյուգյումըմ օսկի կա, քարը սրչէ, օսկին հանե տանե բոլ, բոլ ուտե։

Մարթը ինքն իրեն ըսավ.— Թե օր ճնճուղի ըսածը ղօրթ է, քարը սրչեմ այեմ, թե օր օսկի կա, ձկան ինձի տված մուրադը էդի է։

Քարը սրչեց, ձեռքովը ճանգռթեց, փորեց, քիչ փորեց, գյուգյումըմ դուս էկավ, օսկին առավ, ինքն իրեն ըսավ. «Ղօրթ է, ձկի տված մուրադը էս է»։

Առավ էկավ տունը, կնիկը շատ բարկցավ թե.— Մենք քեզի հետ օր էինք կտրել։

Կնկան ըսավ.— Դու ինձնէն ի՞նչ գուզես։

Կնիկը ըսավ.— Ես քեզի ըսել էի, թե դու ինձի լավ ապրեցուր, հարուստներու պես, թե չէ սե քեզի թող կուտամ, կնիկ չեմ ըլլի։

Էրիկը բուռըմ օսկի հանեց.— Ահասիկ, ա՛ռ, քեզիկ թումբան առ,— բուռմ էլ հանեց,— ահասիկ, ա՛ռ, քեզիկ շապիկ առ, էս գյուգյում օսկին էլ, չում քու մայվան օրը, ինչ գուզես առ ու կե։

Ուրախությամբ հացերը կերան ու պառկան։ Կնիկն ըսավ.— Մա՛րթ, օսկին քեզի ո՞րդից է։

Մարթը ձկի խրատ միտքը բերելով չ'ըսավ։

Մարթը ըսավ.— Դու ինձնե ինչո՞ւ կը հարցնես, թե օսկի որդից է, դու գուզեիր լավ ապրել, էդ օսկիով կե, խմե, հաքի։

Կնիկը ըսավ մարթուն.— Ես քու կնիկդ ըլլիմ, քու սրոը կարելի չէ օր չ'գիտնամ, պետք է գիտնամ։

Մարթը ըսավ.— Ես չեմ կրնա ըսել, թե օր ըսեմ, ինձ համար վնասավոր է։

Կնիկը գիշեր շատ նեղեցուց, թե՝ ըսա՛։

Մարթը ըսավ.— Էս գիշեր համբերե, գալոզ գիշերը ըսեմ քեզի։

Հ'եգի գիշերը պառկան, կնիկը ըսավ թե.— Դե ըսե։

Մարթու նպատակն էր, կնկանէն նեղընալով ըսեր պիտի։

Իրենց ֆուխարությյան ժամանակը մեկ բոզ եզմ ունեին, մեմէլ մենձ շունմ ունեին, մեմէլ մե խորոզմ ունեին։

Կնիկն, օր ուր էրկան կը նեղեցներ, կըսեր. «Դե ըսե», մարթու հոքուն հասավ, պիտի ըսեր, արթըխ շունը մարթու միտքը հասկըցավ։ Շունը ըսավ խորոզին՝ դունէն պառկած տեղը.— Խորոզ ախպեր։

Ըսավ.— Ի՞նչ է շուն ախպեր։

— Գիտես,— ըսավ,— էսօր մեր տան տերը իրեն սրոը պիտի դուրսը ըսե ու մեռնի, բոզ եզը պիտի մորթեն, փետրտի հացը (ժամկոչներուն, գերեզմանը փորողներուն տրված հացը)[1] պիտի կերցը-

[1] Ծանոթ. բանահավաքի։

նեն, օսկօրները չօփլուգ կը թափեն, կէրթամ բոլ, բոլ կը կրծեմ։

Խօրոզը ըսավ.—Պապանձի քու բերանը, ի՞նչբէս լայեղ կու տեսնիս մեր տան տիրոջ մեռնիլը,— ըսավ,— մեր տերը թող չ՚ըսե սրոը։

Շունը ըսավ.— Ձես իմացե, անզգամ կնկա էրեսեն մարթը գնացել ծօվն է ընգել։

Խօրոզը կ՚ըսե.— Շուն ախպեր, ես քեզի խրատ մի տամ։ Թող մեր տան տերը էման էնե, ես մե խօրոզմ եմ, քառսուն հավ ունիմ չօփլուգի ծերը, իմ խոսքես չեն դուս էլլի։

Շունը կ՚ըսե.— է ինչպե՞ս էնե։

— Շուն ախպեր, էս գիշեր թող չ՚ըսե։ Կնկան էրթում էնե, թե. «Վաղը գիշեր ես քեզի կ՚ըսեմ», էքվնէն էլլե, Ալ սլրգի խօլթուղ փալութ կա, էնդից դաստե մի բիր կտրե, օստերը թարսինա զարկե, բերե նեքսեը պայե, վաղը գիշերը կնիկ օր կըսե. «ըսե», կնկան ըսե թող. «Կեցի ես տեղես էլլիմ, հալավս հաքնիմ կայնիմ, քեզի իմ սրոը պատմեմ», թող էլլե, դաստով բիրը նեքսեեն առնե, գա կնկա յաթաղի վրա կայնի, կնիկն օր կըսե. «պատմե», բիր թող հանե պաշլայե զարկելը, մինչև օր բրերը կոտրի, կնիկը թօբա կէնե, դհա չի ըսեր թե. «էս օսկին որտեղից է քեզի»։

Խօրոզի ու շանը խօրաթեն մարթը իր տեղի մեշ լսեց, հասկըցավ ու կնկանը չ՚ըսավ սրոը։ Խափեց, ըսեց.— Վաղը գիշեր քեզի կըսեմ։

Էլավ վաղը գնաց բրրեր կտրեց, բերեց նեքսեը պայեց։ Օր քնելու վախտը էկավ, օր պառկան, կնիկը ըսավ.— Դե սրոդ պատմե, ըսե այիմ որդի՞ց է օսկին։

Մարթը էլավ վեր, հալավը հաքավ նեքսեէն բրերը բերեց, կնիկը ըսավ թե՝ «ըսե», պաշլայեց էրիկը բրբսվ զարկել տեղաց մեջ, հինգ բիր օր կոտրավ վրրեն, կնիկը ըսավ.— Ես քեզի թօբա, դհա չեմ ըսե, թե օսկին որդի՞ց է։

Ետվան մարթը ազատվավ, կերավ, խմեց իրեն մուրադին հասավ։ Դուք էլ հասնիք ձեր մուրադին։

Խրատ ըլլի օր կնկան սրոդ չըսես։ Կնիկը քրզի կու տանի, դժոխքը կու ցքե։

Երկնուց իրեք խնձոր իշավ, մեկ ըսողին, մեկ գրողին, մեկը լսողին։

ԶԱՎԱԽՔ

ԿԱԽԱՐԴ ԱՐԱՊԸ

Կ'ըլլի չ'ըլլի ժամանակով մե էրիգ կնիգ գըլլին։ Իրենք շատ աղքատ գըլլին։ Օրըմ կնիգը կէրթա տներէն կօրկօտ, բ'լղուր կը մուրա։ Գուքա մարթուն կ'ըսե կը.— Ա՜յ մա՛րթ, քնա՛ մե քիչ մեշեցէն վառելիք բ'եր, մե արուր էփենք, տաք տաք ուտենք։

Մարթը կացին կ'առնե կը, կ'էրթա մեշէն։ Շատ կ'էրթա, քիչ կ'էրթա ռաստ գուքա կը խօշօր քյութուկիմ։ Կացինը զարնե կը օր մի քանի կտօր փատ կօտրե, մե մա տեսնես մե արապ դ'ուս գուքա ու հարցնե կը.— Ա՜յ հօղածի՛ն, ի՞նչ գո՛ւզես։

Մարթը շվարած կ'ըսե կը.— Աղա՛, խեղճ եմ, մեղք եմ, էկեր եմ մե քիչ փատ տանեմ, արուր էփեմ։

Արապը մեղքնա կը մարթուն վրա, կըսե.— Ես քեզի անպես մե քանըմ տամ օր թօռեց թօռ ուտես, չի՛ պարպի։ Տա՛ր աս սինին եփօր ըսես. «Բ'ացվե սեղան, բ'ացվե», ի՞նչ տեսակ կերակուր ուզես պատրաստ գըլլի կը։

Մարթը ուրախությամբ սինին կառնե տուն գուքա։ Տունը հասնելուն պես, սեղանը բ'երե կը կըսե.— Բ'ա՛ցվե սեղան, բ'ացվե։

Անմիջապես սեղանին վրա ամեն տեսակ կերակուր ու խմելիք հազըր գըլլի կը։

Մե վախտ կանցնի, մարթ ու կնիգ մտածեն կը, թե. «Փաշային տուն կանչենք»։ Մարթ ղրկեն կը, փաշային տուն կը կանչեն, սինին գ'նեն կը, կըսե մարթը. «Բ'ացվե, սեղանս բ'ացվե», ամեն տեսակ կերակուրներ պ'ատրաստ գըլլին։ Փաշան փօրը կուշտըմ կը կշտցնե։ Շնորհակալություն կը հայտնե ու դուս կելնե։

Փաշան նախանձելով խեղճ մարթու ադ սինիին վրա, գուզե

ձեռնէն խլել։ Մարթ ղրկե կը սինին գուղե։ Խեղճ մարթը առանց գ'իտնալու փաշայի միտքը, սինին կուտա կը, տանին։ Հ'էքսի օրը փաշան մե ուրիշ սինիմ ղրկե կը անօր սինին տեղը։

Իրիկուն հացի նստած վախտը, մարթը կըսե.—Բ'ացվե', սեղանս, բ'ացվե,— ամմա շատ կը զարմանա օր կերակուր բ'ան հազր չկա, կը հասկնա փաշայի սատանությունը և բանըմ չի կրնա էնե։

Կանցնի մե վախտըմ, կենա կ'աղքտնան, կենա կնիգը էրգան կըսե կը.— Մա'րթ, քնա' մի քիչ փատ բ'եր արուրմ էփենք ուտենք։

Մարթը կացին կառնե' կէրթա անտառը, կը հանդիպի կենա ան քյութուկին, մեկ քանի հատ կացնով զարնե կը, Արապը դուրս կելնե, կ'ըսե.— Ա՜յ անկո՛ւշտ մարթ, կենա ի՞նչ գուղես։

Մարթը վախնալով կ'ըսե կը.—Աղա', սինին փաշան ձեռքես առավ, կենա մնացինք խեղճ, անտեր։ Խեղճ եմ, մեղք եմ, մե քիչըմ փատ տանիմ։

Արապը կատղած, կը վերցնե մարթուն էշըմ կուտա կը, կըսե.— Եփօր ըսես «չիու զրռ», ետնեն օսկի կը թափի։

Մարթը կուրախնա կը, հեծնի կը իշուն վրա, գուքա կը տուն։ Տունը հասնելուն պես կըսե.— չիու, զրռ,— օսկիները կը թափին կը։

Մե օրըմ, մարթ ու կնիգ, խելք խելքի կուտան, հեծնին կը էշը, կէրթան կը բ'աղնիք։ Հանվելու վախտը, համամճին թենպեհ կընեն կը օր չ'ըլլի թե իշուն «չիո՜ւ, զը՜ռ» ըսե, վերջը օսկիները կը թափի։ Համամճին ձ'ենն չի հանե, եփօր անօնք նես կէ,ութան, համամճին իշուն «չիու, զրռ» կըսե։ Էշը օսկիները կը թափե։ Համամճին եփօր աս բ'անը տեսնի կը, խելքը թոցնե կը։ Խաբար կենե կը, մե հ'ուրիշ էշ բ'երել կուտա և մյուս էշը իրենց տունը ճամբել կուտա կը։

Լօղանալէն վերջը, փարա տալու վախտը, մարթը իշուն ինչքան օր «չիու զրռ» կէնե, էշը օսկի չի թափե. էրիգ կնիգ էշը կուտան իրենց լօղանալու տեղը, կելնեն դուքան կը։ Կանցնի մե վախտըմ, կենա կաղքտնան։

Կինը կըսե մարթուն.—Ք'նա' ցախ բեր, արուր էփենք։

Մարթը կելնի կէրթա կենա էն քյութուկին ռաստ գուքա, վախնալով էրկու իրեք կացին կը զարնե, էն Արապը դուրս գուքա, կ'ըսե.— Ա՜յ հօղածին, դ'ուն ի՞նչ անկուշտ մարթ ես։— Եվ քիչ մնա կը օր մարթուն ուտե։

Խեղճը կաղաչե կը, պաղատե կը, Արապին հերսը գիչնի կը։ Աս անգամին ալ մե հատ երկանք կուտա կը, կըսե. «Օսկի կաղաս։

Մարթը ուրախ դառնա կը տուն։ Քարերը սարքե կը, կաղա, օսկի կը թափի։

Մարթը կը զենկիննա, դ'րկիցները դ'իմանան, դուքան կը խա-փեն, կըսեն.— Մեմ ձ'եր երկանքը տվեք, տանինք քիչըմ բ'լղուր ա-զանք ու բ'երենք։

Կը տանին, տեղը ուրիշ էնղերիե[1] քարեր կը բ'երեն։ Խեղճերը շատ կը դ'արցնեն, ալ օսկի չի թափի։

Կենա կաղքտնան կը, վախտըմ կանցնի, կնիգը կենա կըսե.— Պիտի էրթաս փատ բ'երելու։

Մարթը աս անգամ ճարը հատած կելնե կ'էրթա քյուրթուկին քո-վը, մե կացին կը զարնե, Արապը դուս կ'ելնե կյ. կըսե.— Ա՜յ ան-կուշտ հողածին, ադքան բանը քեզի տվի չկշտացա՞ր, կենե՞ էկեր բ'ան գուզես։

Խեղճը կ'ըսե.— Ունեցած չունեցածս ուրիշները ըրթտուն տա-րան, խեղճ եմ, եկա կտորմ փատ տանիմ։

Արապը, ճարը կտրած, ըսավ.— Աս անգամ ա ասի կոպալը տար, եփոր ըսես. «Կոպալ, ել ու հ'իշի», օսկի կը թափի։

Մարթը աս անգամ ա ուրախցավ։ Կառնե կը կոպալը, գուքա տուն։ Եփոր կըսե. «Կոպալ, ել ու հ'իշի», կոպալը կելնե ու կիշնի իրեն գլխուն, լավըմ ծեծե կը։

Մարթը խրատված, կառնե կոպալը, կէրթա փաշային տունը ու կըսե.— Փաշա, չըլի ըսես կոպալ ել ու հ'իշի, սորա[2] օսկիները թա-փին կը։

Փաշան, կարծելով թե սինիին պես է, բիրտեն բիրե կըսե.— Կո-պալ ել ու հ'իշի։— Կոպալը կելնե կը, կ'իշնի կը էնքան զարնե կը փաշին գ'լխին, որ փաշան կըսե.— Ա՜յ, սինիի տերն է էկե, տվեք թող տանի։

Մարթը կ'առնե սինին, քեֆով կը վազե բ'աղնեպանին քովը։ Բ'աղնեպանին կ'ըսե.— Չ'ըլի թե ասոր ըսես կոպա՛լ, ել ու հ'իշի, սորա օսկիները կը թափի։

Համամճին գիտնա կը թը, ադ ալ իշու պես է, կըսե.— Կոպա՛լ, ե՛լ ու հ'իշի,— էնքան կը զարնե որ համամճին կըսե.— Ցամա՜ն, ի-շուն տերն է էկե, տվեք թող տանի էշը։

Երկանք տանող դ'ռացիին տունը կէրթա, անկից ալ երկանքը կ'առնե և ուրախ ուրախ տուն գուքա։

Կուտեն կը, խմեն կը, քեֆ կէնեն կը։

Երկնքեն իրեք խնձոր հ'իշավ. մեկն ասողին, մեկը՝ լսողին, մեկն ալ բոլոր աշխարհին։

---

[1] Հասարակ (Ս. Բ.)։

[2] Եռև (Ս. Բ.)։